

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 7/12

23 փետրվարի 2016 թ.

Քննարկվեց քաղաքացի Յուրիկ Շահինյանի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 07.09.2015 թ-ի թիվ 352 որոշման վերաբերյալ:

Քաղաքացի Յուրիկ Շահինյանի գանգատում բերված փաստարկները.

Յուրիկ Շահինյանը հայտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության պետից 01.12.2015թ-ին ստացել է թիվ 352 առ 07.09.2015թ-ի որոշումը և ծանուցագիրը:

Յուրիկ Շահինյանը հայտնում է նաև, որ աշխատել է «Սոֆիա» ընկերությունում (ՀՎՀՀ 01810875) որպես գործադիր տնօրեն մինչև 2000թ-ի օգոստոս ամիսը, որից հետո որևէ առնչություն նշված ընկերության հետ չի ունեցել: Յուրիկ Շահինյանը չի հանդիսանում նաև «Սոֆիա» ընկերության բաժնետեր: Ուղարկված գրությունները ստանալուց հետո նա ներկայացել է Շենգավիթի հարկային տեսչություն, որտեղ պարզվել է, որ «Սոֆիա» ընկերությունը հաշվառված է Մաշտոցի հարկային տեսչությունում: Փորձել է Շենգավիթի և Մաշտոցի հարկային տեսչություններից պարզել կայացված 902.200 դրամ հարկային պարտավորության հիմքերը (ստուգման ակտը)՝ ավելի շատ հասկանալու համար, թե ով է եղել «Սոֆիա» ընկերության պատասխանատուն այդ պարտավորության առաջացման ժամանակ, սակայն ապարդյուն: Նշված տեսչություններում ոչ մի պատասխանատու չի կարողացել ներկայացնել այդ գումարի ոչ պատմությունը, ոչ հիմքերը:

Վերը շարադրվածը հաշվի առնելով, Յուրիկ Շահինյանը հայտնում է, որ որևէ առնչություն չունի «Սոֆիա» ընկերության և ներկայացված պարտավորության հետ, համաձայն չէ ներկայացված պահանջի հետ և հարցը պարզելու համար խնդրում է կարգադրել վեր հանել ներկայացված 902.200 դրամ հարկային պարտավորության հիմքերը: Ենթադրվում է, որ դա պետք է լինի ստուգման ակտ, որը պետք է ստորագրված լինի նաև «Սոֆիա» ընկերության պատասխանատուի կողմից: Դրանով կհիմնավորվի ներկայացված պահանջը և կպարզվի, թե ում պետք է ներկայացնել այդ պահանջը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով «Սոֆիա» ՍՊԸ-ի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 04.09.2015 թ-ի դրությամբ ընկերության չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 902.200 դրամ: Նշված պարտավորությունը ստուգման ակտի 10 տոկոսի գծով է, որը ենթակա է գանձման:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 07.09.2015 թ-ին ընդունվել է թիվ 352 որոշումը (այսուհետ նաև Որոշում) «Սոֆիա» ՍՊԸ-ից 902.200 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ չնայած նրան, որ «Հարկատու 3» համակարգում առկա տվյալների համաձայն ընկերության տնօրենը հանդիսանում է Յուրիկ Շահինյանը, սակայն ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում առկա տեղեկությունների համաձայն ընկերության տնօրենի վերաբերյալ տվյալներ արտացոլված չեն: Տվյալներ են առկա միայն ընկերության հիմնադիրների վերաբերյալ: Այսինքն, «Հարկատու 3» համակարգում առկա տվյալները Յուրիկ Շահինյանը «Սոֆիա» ՍՊԸ-ի տնօրենը հանդիսանալու վերաբերյալ չեն համապատասխանում իրականությանը:

«Հարկատու 3» համակարգում առկա տվյալների համաձայն ստուգման ակտի 10%-ի անձնական հաշվառման քարտը բացվել է 01.05.2003 թ-ին, որի դրությամբ և արտացոլված է 902.200 դրամի պարտավորությունը:

Միևնույն ժամանակ, «Հարկատու 3» համակարգում առկա տվյալների համաձայն սույն որոշումը կայացվելու դրությամբ «Սոֆիա» ՍՊԸ-ի շահութահարկի գծով առկա իրական գերավճարը կազմում է 1.285.435 դրամ:

Ելնելով վերոգրյալ փաստական հանգամանքներից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերության համապատասխան պաշտոնատար անձի (տնօրեն) բացակայությամբ պայմանավորված հնարավոր չէ սահմանված կարգով ներկայացնել դիմում՝ 902.200 դրամի պարտավորության գումարն ընկերության շահութահարկի գծով առկա գերավճարից հաշվանցելու վերաբերյալ, ուստի հարցին լուծում տալու նպատակով Հանձնաժողովը գտնում է, որ հարկային տեսչությանն անհրաժեշտ է հիշատակված հաշվանցումը կատարել դիմումի բացակայության պայմաններում:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

1. ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ-ին.

«Սոֆիա» ՍՊԸ-ի շահութահարկի գծով առկա գերավճարից հաշվանցել (նվազեցնել) ստուգման ակտի 10% չկատարված պարտավորությունը՝ գումարով 902.200 դրամ:

2. Պարտավորությունները կատարված լինելու հիմքով չեղյալ համարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 07.09.2015 թ-ի թիվ 352 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

